ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

01.06.2020

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ շնորհավորում եմ մեր կյանքը լույսով ու ջերմությամբ լցնող, մեր օրերը գունավորող ու բովանդակող էակներին, մեր փոքրիկ բարեկամներին:

Իմ մեծագույն ցանկությունն է, որ մեր երեխաները հասակ առնեն ընտանեկան ջերմ և առողջ բարոյահոգեբանական միջավայրում՝ շրջապատված սիրով ու հոգատարությամբ:

Այս հարցում, ինչ խոսք, մեծ է յուրաքանչյուրիս դերակատարումը: Եվ մենք մեր իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պետք է անենք առավելագույնը, որպեսզի նրանք ունենան անհոգ ու երջանիկ մանկություն և, իհարկե, արժանապատիվ ապագա:

Կրկին շնորհավորելով մեր երեխաներին այս լուսառատ օրվա առթիվ՝ ցանկանում եմ, որ նրանց կյանքի յուրաքանչյուր օրը լցված լինի ուրախությամբ, իսկ ապագայի հետ կապված հեքիաթն իրականություն դառնա: